յում 500-ից աւելի այդպիսի միաբանութիւններ կային, որոնց անդամների թիւը 22,000-ի էր հասնում»:

Հրամանը իր շարունակութեան մէջ մատնացոյց է լինում, 1845 թուի հանգուցեալ թերից և վերջին ժամանակներում կառավարութիւնից առած փոքրերի վրայ՝ այդ միաբանութիւնների ապօրինի գոյութեանը վերջ դնելու համար և հաղորդում է պատգամաւորների օրակարգը (ordre de jour), որ միաբանութեանը պարտաւորեցնում է հսկել օրէնքների կատարման վրայ:

«Այս պատճառով, ասված է հրամանի մէջ, կասրող իշխանութիւնը պարտաւոր է հանդիսաւորութեանը մէջ ցրված միաբանութիւններին ասիպել, որ նոքա հնազանդվին օրէնքներին և ներկայացնեն կառավարութեանը այն հիմունքները, որոնք նրանց գոյութեան օգտակարութիւնը հաստատէին: Հէնց որ կը ներկայացնին այդպիսի արդարացնող հիմունքներ, կառավարութիւնը կորոշի, թէ ինչ տեսակ միաբանութիւնների գոյութիւնը կարելի է համբերել:

«Արգելված միաբանութիւնների թուում կայ մի նշանաւորը, որ բացառական դրութիւն ունի: Մենք խօսում ենք եզուիտների միաբանութեան մասին, որ անդադար արգելվել է և որի դէմ միշտ բողոքել է ազգայնութեան զգացմունքը: Չը կայ այնպիսի կառավարութիւն, որ համաձայնվէր առաջարկել օրէնդիր ժողովներին թոյլ տալ եզուիտների գոյութիւնը: Ամփոփել կը լինէր առաջարկել այդ միաբանութիւններին իրանց գոյութեան համար թոյլատրութիւն տնորել կառավարութիւնից, քանի որ առաջուց յայտնի է, որ թոյլատրութիւնը չի տրվի: Ուրեմն աւելի լաւ է այժմեանից իսկ նրանց ժամանակավոր տալ, որի ընթացքում նոքա իրրև միաբանութիւններ դադարեցնեն իրանց գոյութիւնը: Կարելի են հաստատում, որ մենք կամենում ենք հաղթել առանձին անդամներին կամ նպատակ ունենք անձնական իրաւունքը ոչնչացնել: Մեր նպատակն է արգելված ընկերութիւնների ապօրինի գոյութիւնը դադարեցնելը:

Հրամանի շարունակութիւնը դադարեցնում է եզուիտների միաբանութիւնների գոյութիւնը և երեք ամիս ժամանակամիջոց է տալիս նրանց ուսումնարանները փակելու համար: Նոյնքան ժամանակամիջոց է տրվում արգելված միւս միաբանութիւններին իրանց կանոնադրութիւնները և անդամների ցուցակները ներկայացնելու և կառավարութիւնից թոյլատրութիւն խնդրելու համար:

Այս հրամանը Ֆրանսիական մասուրի կողմից զանազան ընդունելութիւն գտաւ, նայելով լրագրի ուղղութեանը: Արմատական ուղղութեան «Justice» և «Lanterne» լրագիրները այդ հրամանը բաւականացուցիչ չեն համարում և ասում են, որ նա դրական հետևանքներ չի ունենայ: Նոքա ասում են, որ եզուիտների միաբանութիւնների արգելելը և նրանց անդամներին Ֆրանսիայում ապրել թոյլ տալը ծիծաղելի է: Այդ լրագիրները ցանկութիւն են յայտնում, որ եզուիտները Ֆրանսիայից բոլորովին արտաքսվին: «Temps», «Journal des Debats», «République Française» և «Voltaire» լրագիրները հրամանից գոհ են: Կլերիկալների լրագիրները չափազանց յարձակվում են այդ հրամանի վրա:

ԱՐԵՒԵԼԵԱՆ-ՐՈՒՄԵԼԻԱ

Ֆլիպպոպոլից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետևեալը:

Մուլլա Դուրդամ, որ Թեզոյի ապրերի մէջ եղած վերջին ապստամբութեան գլխաւոր առաջնորդն էր, կալանաւորված է իր երկու համախոհների հետ և բերված է այստեղ: Նա 65—70 տարեկան ծերունի է, խելացի և հաստատ դէմքով: Այսորերը դատարանը նրա զործը կը քննէ և վճիռ կը կայացնէ հետևեալ ութ ամիսների ընթացքում: Կապիտան Աչերօվ, որի հրամանով, ապստամբներին հալածելու ժամանակ, այրված է Բարալար գիւղը, կալանաւորված է և զինուորական դատաստանի է ենթարկված: Դատաստանը երևի նրան կարգաթացնի, որովհետև գլխաւորապէս շարի հրամանատարը և քաղաքականը հրամայել էին նրան ապստամբներին անդամ հալածել մինչև Արդա գեղի միւս կողմը: Կիրդայի մէջ ապստամբութիւնը բոլորովին նուազված է և երիցը կարող էր հանգստութիւն վայելել, եթէ զիրեկտորիայի անդամները միմեանց հետ անդադար չրկուէին: Ֆինանսների զիրեկտոր Նամդա այլ ևս չէ մասնակցում զաղտի խորհուրդի նիստերին և խիստ այլ ևս վարչութեան անդամ չէ, թէպէտ գեռ իր պաշտօնը չէ թողել: Նա ինքը հրաժարական չէ տալիս, որպէս զի սպասէ Ալիքօ-փաշային, որ նրան հրամայի հրաժարվել պաշտօնից: Գեներալ Նարիկեր նոյնպէս կուզեցաւ թէ իր պաշտօնակից Ալիքօ-փաշայի հետ և թէ բոլգարական զորքերի առաջ և բոլգարացի օֆիցերների հետ: Նա բացարձակ յայտնում է, որ միայն երկու շաբաթ կը մնայ Արևելեան-Ռումելիայի մէջ: Գլխաւոր քարտուղար և ներքին զորձերի կառավարիչ Կրեստովիչ փոխեց իր ընթացքը և ինտրիգներ է սկսել Ալիքօ-փաշայի և ժողովուրդի սիրելի Վուլկովիչի դէմ: Միւս կողմից անուանի անձնատրութիւններից և անբաւական պաշտօնեաներից կազմված մի մասնաժողով օգնում է այդ անբաւականութեանը, դրդում է յոյներին բոլգարացիների դէմ և մահմեդականներին հրահրում է ապստամբվել: Այժմ այդ մասնաժողովը աշխատում է Վասել Վուլկովիչին և ոչնչացնել նրա հեղինակութիւնը Բ. Դրան առաջ: Մասնաժողովը արդէն կարողացել է այնքան անել, որ գիրեկտորիան զրեթէ քայքայված է և զինեալ Նարիկերի հրաժարականի պատճառով թիւրքաց կառավարութիւնը անբաւական կը լինի Ալիքօ-փաշայից: Եթէ Նարիկեր հրաժարվի, նրա պաշտօնը կը յանձնվի մահմեդականութիւն ընդունած մի ռուսի: Թէ ռուս և թէ բոլգարացի օֆիցերները յայտնում են, որ նոքա աւելի ուրախութեամբ կը ծառայեն մի մահմեդականի իշխանութեան տակ, քան թէ մի եւրոպացու:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Անգլիական ազատամիտ կուսակցութեան առաջնորդ Մարկիզ Հարթինգտոնի մարտի 23-ին խօսած ընտրողական ճառի մէջ կան հետևեալ դիտողութիւններ:

«Զանազան անիարկութիւններից կարելի է ենթադրել, որ այժմեան կառավարութիւնը, եթէ պահի իր իշխանութիւնը, եւրոպական խաղաղութիւնը պահպանելու համար մասդիր է դաշնակցութիւն հաստատել Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի հետ: Ես կասկածում եմ, որ մենք, այդպիսի դաշնակցութեանը մասնակցելով, կարողանայինք պահպանել եւրոպական խաղաղութիւնը: Տարաբաղդաբար այժմ հանգամանքները այնպէս են, որ իւրաքանչիւր բարեկամական դաշնակցութիւն մի քանի պետութիւնների մէջ, միւս պետութիւնները իրանց դէմ ուղղված են համարում: Եթէ անգլիական կառավարութիւնը մասնակցէր Ֆրանսիայի թշնամական որ և է դաշնակցութեանը, հաւատացած եմ, որ անգլիական ժողովուրդը կը մերժէր կառավարութեան այդպիսի ընթացքը: Ինչքան էլ աշխատեն պահպանել եւրոպական խաղաղութիւնը, մենք երբէք չենք կարող ի նկատի ունենալ մի այնպիսի դաշնակցութիւն, որ թշնամական լինէր Ֆրանսիական Հանրապետութեանը...

Մարկիզ Հարթինգտոնի ճառի այս մասը արտատպելով, գերմանական լրագիրները հետևեալ կարծիքներ են յայտնում: «Մարկիզ Հարթինգտոնի վերոյիշեալ խօսքերի լոզունները, կամ կարդացողները բնականաբար պէտք է մտածեն, որ անգլիական ազատամիտ կուսակցութեան առաջնորդը համոզված է, թէ աւստրիական կամ գերմանական բաղաքականութիւնը Ֆրանսիայի վերաբերութեամբ թշնամական ուղղութեան է հետևում: Մենք կարծում ենք, որ մարկիզ Հարթինգտոնի ենթադրութիւնը սխալ է: Ինչպէս Գերմանիան, նոյնպէս և Աւստրօ-Ունգարիան ոչ շահ և ոչ ցանկութիւն ունեն Ֆրանսիայի վերաբերութեամբ թշնամաբար զործելու: Նոքա աւելի էլ չեն ցանկանում, որ Անգլիան մասնակցի այդպիսի թշնամական դաշնակցութեանը: Սխալ է նոյնպէս և այն ընդհանուր ենթադրութիւնը, իբրև թէ երկու պետութիւնների դաշնակցութիւնը առհասարակ պէտք է թշնամական նպատակներ ունենայ երրորդի վերաբերութեամբ: Ոչ Աւստրօ-Ունգարիան և ոչ Գերմանիան թշնամական դիտաւորութիւններ չունեն ոչ Ֆրանսիայի և ոչ Ռուսաստանի դէմ: Այդ երկու պետութիւնների ընդհանուր շահերը պահանջում են, որ եւրոպական խաղաղութիւնը պահպանվի և երկուսն էլ իրանց շահի համար պատրաստ են պաշտպանել այդ խաղաղութիւնը: Որքան մեզ յայտնի է մինչև այժմ ոչ ոք չէ աշխատել համոզել Անգլիային մասնակցել այդ դաշնակցութեանը խաղաղութիւնը պահպանելու համար: Ժողովուրդների շահերը զուցէ պահանջում են, որ կառավարութիւնները ապահովին իրանց հպատակներին նոր պատերազմների ասարարդութիւնների դէմ, բայց ոչ Աւստրօ-Ունգարիան և ոչ Գերմանիան մտադիր չեն համոզել Անգլիային այդ մտքի մէջ և բոլորովին չեն ցանկանում բաժանել նրան Ֆրանսիայից: Կրկնում ենք, որ այդպիսի փորձ ոչ ոք չէ արել, նրա մասին մինչև անգամ չեն անարիրել: Ոչ Աւստրօ-Ունգարիա և ոչ Գերմանիա չեն համաձայնվի աշխատել, որ Անգլիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները սառչեն: Բերլինի և Վիէննայի քաղաքականութեանը ուղղութիւն տուող մարդիկ համոզված են, որ Անգլիայի և Ֆրանսիայի բարեկամական յարաբերութիւնները նոյնքան օգտակար են եւրոպական խաղաղութեան համար, որքան Գերմանիայի և Աւստրիայի բարեկամութիւնը: Քանի որ Անգլիան և Ֆրանսիան միմեանց հետ համաձայն կը լինեն, նրանց քաղաքականութիւնը աւելի խաղաղասէր և իրաւացի կը լինի, քան թէ այն ժամանակ, երբ այդ երկու պետութիւնները միմեանցից առանձնացած կը լինեն: Այդ երկու պետութիւնները կարող են համաձայնվել միմիայն այնպիսի նպատակների վերաբերութեամբ, որոնք խելացի և եւրոպական քաղաքակրթութեան շահերին հաճեցատ կը լինեն: Քանի որ այդ երկու արևմտեան մեծ պետութիւնները ձեռք ձեռքի տուած կը զործեն, նոքա փոխադարձապէս կը զգուշացնեն միմեանց խաղաղութիւնը խանգարել և երկուսն էլ խաղաղ և քաղաքակրթող քաղաքականութեանը կը հետևեն: Այդ հանգամանքները ի նկատի ունենալով, Բերլինի և Վիէննայի կառավարութիւնները Ֆրանսիայի և Անգլիայի բարեկամութիւնը եւրոպական խաղաղութեան գրաւական կը համարեն: Մարկիզ Հարթինգտոն, եթէ լաւ ծանօթ լինէր եւրոպական քաղաքականութեան հետ, երբէք չէր ենթադրի, իբրև թէ Աւստրիա և Գերմանիա աշխատում են խանգարել Անգլիայի և Ֆրանսիայի բարեկամութիւնը: Վաղուց արդէն նրա կասված է, որ անգլիական պարլամենտի անդամների ընտրութիւնների ժամանակ, զանազան կուսակցութիւնների առաջնորդները ընտրողների առաջ եւրոպական քաղաքականութեան վրա այն տեսակէտից են նայում, որը շահեկան է իրանց կուսակցութեան համար: Դա շատ բնական է և պատահում է պարլամենտական կեանք ունեցող իւրաքանչիւր երկրի մէջ: Բայց քանի որ Անգլիայի նման մի հզոր պետութիւն իր համար նոր պարլամենտ է պատրաստում, եւրոպական պետութիւնների շահերը պահանջում են, որ նրանց քաղաքականութիւնը ոչ թէ սխալ կերպով, այլ ճշդութեամբ մեկնվի ընտրողներին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Էրզրումից մեզ գրում են որ քաղաքի մօտակայ Միւդիրդեայ գիւղում պատահել է մի զարմանալի անցք մի սովամահ հայի տան մէջ: Այդ գիւղացի մի հայր, հանելով սովից կատաղի խելագարութեան, մորթում է իր սովից որբացած մեկ երեխին և խորոված նորան սկսում է յագեցնել սովի տանջանքը: Հարևանը լսելով մի հոտը ներս է մտնում և որդեկոր հորը գտնում է սարսափելի անցքի մէջ: Ասում են որ ուշքի գալով կատաղի սովեալը ինքը մատնում է իրան ոստիկանութեան, որը սկսել է դատել նորան ինչպէս արիւնարբու մարդասպանին:

***

Էրզրումից մեզ գրում են որ անգլիացի ագենտները մեծ եռանդով հետևել և միաւոր զորքեր են հաւաքում Հայաստանի վիրայէնեներում, ինչպէս մանմատական, այնպէս էլ քրիստոնեայ տարերքից, վճարելով իւրաքանչիւր ձիաւորին հինգ ոսկի ամիսը, իսկ հետեակին 2½ ոսկի: Ասում են որ առհասարակ կամաւոր զինուոր գրվողների թիւը չատ մեծ է և հայերը միահաւան վճռել են ուրախութեամբ գրվել կամաւոր զինուորներ այն պայմանով միայն, որ նոքա չուղարկին Հայաստանի սահմանից դուրս ծառայելու: Կառայութեան ժամանակը 7 տարի է:

***

Պարսկաստանի Սարմատ գաւառի Ղալասար գիւղից պ. Պատալ Արզումանեանց մեզ գրում է, թէ ստացել է Դաւրէժից պ. Աչէքսանդր Թամիրեանցից 20 մուման նոյն գաւառում գտնված աղքատկեցի գաղթականներին բաժանելու համար: Գաղթականների թիւը հասնում է աւելի քան 1500 հոգու:

***

Էրզրումից մեզ գրում են, որ մինչև մարտի 10-ը Պաչկիրտի գաւառում սովից մահացող հայերի թիւը հասնում է 200 հոգու: Սովը աւելի մեծ կոտորած է անում այս գաւառի քրդերի մէջ, որոնք ոչինչ չունեն ուտելու:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 ապրիլի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է Թագուհու առողջութեան մասին բիւլետէնը: Մարտի 26-ից մինչև ապրիլի 1-ը, անցեալ շաբաթ Թագուհու առողջութեան մէջ նկատված բարելավվելը՝ շարունակվում էր փոքր փոփոխութիւններով: Ներկայ ամբողջ շաբաթվայ ընթացքում քունը և սնորդաքը բաւականացուցիչ էին: Այժերը նոյնչափ են պահպանվում: Սարազրեցին բժիշկներ Ալիշեվսկի և Բոտկին: Իշխան Գորչակովի առողջութիւնը լաւանում է:

ՄԱԴՐԻԴ, 2|14 ապրիլի: Այսօր առաւօտ Օսերօ գլխատված է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 ապրիլի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 կ., երկրորդ 93 ր., երրորդ 92 ր. 50 կ., չորրորդ 93 ր.: Ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 228 ր., երկրորդ 221 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր., ոսկի 7 ր. 74 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 25,40 պէնս, ռուսաց 100 ռուբլ Համբուրգի վրա 216 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա 216 ֆր. 50 սանտ: Բորսայի արտամարդրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ